ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«29» ապրիլի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Պարարվեստի հարգարժա՛ն ներկայացուցիչներ

Սրտանց շնորհավորում եմ Պարի միջազգային օրվա առթիվ:

Այս տոնը, որը միավորում է մարդկանց, կամրջում է աշխարհի տարբեր ծայրերում ապրող մշակույթները, համաշխարհային մշակութասեր հանրությունը սկսել է նշել 1982-ից:

Պարը եղել և մնում է հայ ժողովրդի աշխարհայացքի և գեղագիտական մտածողության ամենավառ դրսևորումներից մեկը և արտացոլում է մշակութային առանձնահատկությունները, աշխարհի ու կյանքի հանդեպ ունեցած մարդու վերաբերմունքը:

Ազգային պարը նաև ժողովրդի պատմության, կենսակերպի ու ավանդույթների, երազանքների ու նվաճումների ամբողջացումն է:

Սրտանց շնորհավորում եմ մեր պարարվեստի ներկայացուցիչներին, երախտավորներին ու նվիրյալներին:

Ստեփանավանում գործունեություն ծավալող պարարվեստի հարգելի գործիչներ, շնորհակալ ենք ձեզ նվիրյալ աշխատանքի՝ հայ պարարվեստը պահպանելու, զարգացնելու, սերունդներին փոխանցելու տարիների տքնաջան գործունեության համար:

Մաղթում եմ հաջողություն, պարարվեստը գնահատող լեփ-լեցուն դահլիճներ և արժանի գնահատանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ